ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

ԹԵՄԱ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

ԿԱԶՄԵՑ՝ Աննա Աղայան Արմոյի (անուն, ազգանուն, հայրանուն)
Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց (դպրոցի անվանումը)

ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Գրիգորյան <<Կապանի N2 ավագ դպրոց>>
ՊՈԱԿ (վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Մեղրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն---------- 1

Ներածություն---------- 2

Հիմնական մաս

Գլուխ 1

Համագործակցային ուսուցման կազմակերպումը ---------- 4

Գլուխ 1.1

Համագործակցային ուսուցման կիրառումը---------- 7

Գլուխ 1.2

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները---------- 8

Գլուխ 2

Համագործակցային ուսուցման տարրերը---------- 9

Գլուխ 2.1

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները---------- 11

Գլուխ 2.2

Գլուխ 3

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները---------- 13

Գլուխ 3.1

Համագործակցային ուսուցման մեթոդները---------- 14

Գլուխ 3.2

Կագանի մեթոդով համագործակցային ուսուցման եղանակ---------- 16

Եզրակացություն---------- 19

Օգտագործված գրականություն---------- 20

Ներածություն

Համագործակցային ուսուցման գաղափարախոսությունը և մեթոդները

Երանի հանրությունը մի օր հասկանա, թե ինչ ծավալի աշխատանք են կատարում ուսուցիչները:

Բրադ Ջոնսոն

Ուսուցիչը աշակերտին նվիրվում է անմնացորդ, և իր արդյունավետ աշխատանքի համար կիրառում է ուսուցման բազմազան միջոցներ: Այս աշխատանքն ընտրելու նպատակն այն է, որ ավելի մանրամասն ուսումնասիրենք համագործակցային ուսուցման գաղափարախոսությունը և մեթոդները, որպեսզի ուսուցման գործընթացը դառնա ավելի արդյունավետ, զարգանա սովորողների գիտելիքների և հմտությունների շրջանակը: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է.

- սահմանել առաջադրանքը
- ուսումնասիրել տեսական նյութերը
- ընտրել ավելի արդյունավետ մեթոդներ
- նկարագրել մեթոդների կիրառումը իրական կյանքում կոնկրետ որևէ նյութ ուսումնասիրելիս
- վերջնական եզրակացության հանգել:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկը համագործակցային ուսուցումն է: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ, օգնում է ակտիվացնել երեխաներին, ստեղծել աշխատանքի առանձնահատուկ պայմաններ:

Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Այդ պատճառով

համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է, և դրա համար ուսուցիչներից պահանջվում է մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

<<Առանց իր անդամների համագործակցության

հասարակությունը չի կարող գոյատևել, և մարդկային հասարակությունը

գոյատևել է, քանի որ նրա անդամների համագործակցությունը

գոյատևումը դարձրել է հնարավոր...>>

Բոլորիս քաջ հայտնի է, որ աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն:Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը:Այն, ինչ մի ժամանակ թվում էր հավերժական և անփոփոխ ճշմարտություն, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ:Սակայն միայն տեխնոլոգիաների և գիտության շնորհիվ չէ, որ փոփոխվում է աշխարհը:Մեր վերափոխվող կյանքի ուղեկիցներն են վախը, անպաշտպանվածությունը, աղքատությունն ու շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները:

Կրթական համակարգում դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցումը մանկավարժական նոր գաղափար չէ:Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությանը, այն չի գտել լայն կիրառություն: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության

վկայությունների բացակայությունը չէ: Համագործակցային ուսուցումը ժամանակակից ,դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշը գիտելիքների և հմտությունների ուսուցմանը վերաբերող հետազոտությունների

արձագանքները բավական խոստումնալից են:

Կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: այդ պատճառով է, որ համագործակցային ուսուցումը դասարաններում քիչ է կիրառվում և դպրոցներում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Մեր կրթական համակարգում դեռ նոր են սկսում կիրառվել փոքր խմբերով ուսուցման մեթոդները, որպես գիտելիքների հասարակության և բարեկեցիկ ապագայի համար ուսուցման արդյունավետ տարրեր: Հեռանկարը խոստումնալից է. ուսուցման բարելավված որակ և կրթական հաամկարգի առավելագույն համապատասխանեցում ժամանակակից հասարակության կարիքներին: Այնուամենայնիվ անհրաժեշտ է չմոռանալ և հիշել, որ ոչ մի մանկավարժական մոտեցում ինքնին բավարար չէ: Ընդհանուր առմամբ դասավանդումը պետք է լրացվի մոտեցումների, ուսուցման միջոցների և տեղեկատվության աղբյուրների բազմազանությամբ: Այդ ամենի ճիշտ տարբերակը դա ուրիշների հետ համագործակցությամբ անելն է, քան թե՝ միայնակ:

Անհրաժեշտ է հիշել, որ համագործակցային ուսուցումը սկզբունքների, տեսությունների և փորձի համադրություն է, ինչը դպրոցում արդյունավետ կիրառելու համար պահանջում է ուսուցչի սերն ու նվիրվածությունը:

Ուսուցման մոտեցումների և մեթոդների ընտրությունը առավելապես ուսուցչի խնդիրն է: Ուսուցիչը՝ որպես կրթական գործընթացի անմիջական կազմակերպիչ, շահագրգռված է ապահովելու ուսման բարձր որակ, որի հիմնական արդյունքներից մեկը անհատի կողմից աշխատանքի շուկայում կամ շարունակական կրթության հաամկարգում իր տեղը հեշտությամբ գտնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռքբերումն է:

Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը, ի դեմս վաղվա կրթված և հասուն, պետական գործունեություն ունեցող, փոխօգնության պատրաստ և ի վիճակի, հանդուրժող, օրենքներ և այլընտևանք հարգող, կյանքի դժվարին իրավիճակում կողմնորոշվող և որոշումներ կայացնող

քաղաքացքու:

Համագործակցային ուսուցումը ուսումնառության գործընթացը կդարձնի առավել գրավիչ և հետաքրքիր՝ նպաստելով սովորողների համար հավասար մասնակցության հնարավորությունների ստեղծումը: Սա թույլ կտա ուսուցչին լուծել ավանդական մեթոդներով գրեթե անլուծելի թվացող բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանը կդառնա ընդհանուր նպատակ ունեցող անհատների փոքր խմբերի մի թիմ, որտեղ հեշտությանբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից:

Համագործակցային ուսուցման կիրառման դեպքում սովորողները համատեղ ջանքերով կարող են լուծել բարդ խնդիրներ: Դա ուսուցչի առաջ կդնի նոր ու ավելի բարդ խնդիրներ՝ կապված ուսուցման նպատակների հետ. գիտելիքի մատուցմանն ու վերարտադրման ստուգումը փոխարինելու են ուսուցման գործընթացի կառավարման և սովորողներին նոր հմտությունների ուսուցման մոտեցումները: Դրա արդյունքում խիստ արդիական են դառնում <<ի՞նչ>> և <<ինչպե՞ս>> սովորեցնել հարցերը:

ԳԼՈՒԽ 1.1

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի:
Կոմենսկի

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: Հրեաների հին կտակարանների մեկնությունների վրա հիմնված կրոնական, կենցաղային կանոնների ու պատվիրանների ժողովածուում՝ Թալմուդում, ասվում է. <<Որևէ ուսմունք հասկանալու համար պետք է ընկեր ունենալ>>:

Համագործակցային ուսուցման մեթոդի վրա աշխատել են ամերիկացի գիտնականներ Ջոնսոնները, Ջոն Բրաուները, Պասի Սահլբերգը, Սպենսեր Կագանը, ռուսներ Իլինը, Շատալովան, Վոլկովը:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են երեք տեսություններ.

1. **Սոցիալական փոխկապվածության տեսություն.** խումբը դինամիկ ամբողջություն է, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկապվածությունը:
2. **Ճանաչողական զարգացման տեսություն.** մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է:

3. **Վարքագծային ուսումնառության տեսություն.** խրախուսվում է խմբային աշխատանքը:

Համագործակցային ուսուցումը նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը, ուսուցումը դառնում է առավել հետաքրքրական՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հնարավորություններ: Սովորողներն իրենց ավելի անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Նրանք համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ յուրացնելով գիտելիքը և կիրառելով այն իրական կյանքում:

Գլուխ 1.2

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաներ

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

- անձի զարգացում և անհատականության ձևավորում.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում.
- սթրեսի հաղթահարում.
- առողջ փոխհարաբերությունների դրսևորում:

Գլուխ 2

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերը՝ ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. **Դրական փոխկապվածության ապահովում.**

Խմբում ձևավորում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. **Դեմ առ դեմ, խթանող փոխհարաբերություն.**

Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն**.

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. **Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ**.

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

5. **Խմբային գործընթացի մշակում**.

Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում Պասի Սալբերգի կողմից այս տարրերին ավելացվել է ևս մեկը .

6. **Փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում**.

խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների,

կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ:

Սա համագործակցային ուսուցման տարրերի գծապատկերն է.



Գլուխ 2.1

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

- **Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր**

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է.

1. Խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել;
2. Պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը:

3. Բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր:
4. Յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

- **Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր**

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողի ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար:

- **Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր**

Համագործակցային ուսուցման հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռք բերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային

հարաբերություններ: Համագործակցային խմբերում աշակերտներն իրենք են միմյանց սովորեցնում նյութի այս կամ այն հատվածը: Յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսների կողմից նյութը յուրացնելու համար:

Գլուխ 2.2

Համագործակցային աշխատանքի առավելությունները

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր համագործակցային միջավայրի ձևավորմանը, պայմաններ է ստեղծում արդյունավետ ուսուցման համար: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է հենց աշակերտի միջոցով, ուստի բարձրանում է աշակերտի ինքնաճանաչման մակարդակը: Համագործակցային իրավիճակներում անհատները փոխներգործում են, նպաստում եմ միմյանց հաջողությանը, ձևավորում են հետաքրքրությունների լայն շրջանակ, և միմյանց կարողությունների մասին իրական պատկերացում է ստեղծվում:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական

գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և ունակ՝ լինելու խմբի անդամ և համագործակցելու:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին

աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում, երբեմն կարող են լինել անարդյունավետ: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

ԳԼՈՒԽ 3

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը:

Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել՝ միայն դիտողի, լսողի պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման անհատական

հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարանի (մեծ խմբի) հետ, ապա աշակերտներն արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն
- ձևավորում է հաղորդակցման հմտություն
- աշակերտները սովորում են միմյանցից
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը
- ձևավորվում է միմյանց հետ հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում
- խթանում է թիմային աշխատանքը
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար
- քննարկումների միջոցով ամրապնդվում են աշակերտների համոզմունքները
- ընձեռում է ակտիվ մասնակցության ու ինքնադրսևորման հնարավորություն:

Գլուխ 3.1

Համագործակցային ուսուցման մեթոդները

Համագործակցային ուսուցման մեթոդներ

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգրոպեանոց ազատշարադրանք

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր

Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ

էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան

է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի

պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր

առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝

կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները : Այս մեթոդի

առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին

աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է

Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում:

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել

գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու,

քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը

ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի

դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին

վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ

ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն,

ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հիննգրոպեանոց ազատ շարադրանք

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում,

այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և

առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո

դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

ԳԼՈՒԽ 3.2

Կագանի մեթոդով համագործակցային ուսման եղանակ

Դոկտոր Սպենսեր Կագանի «Համագործակցային ուսուցում» աշխատությունը հրապարակվել է 1985

թվականին (Սան Կլեմենտե, Կալիֆորնիայի նահանգ. Kagan Publishing): Այս գիրքը

համագործակցային ուսուցման եղանակների ամենալիարժեք և ամենաարդի ժողովածուն է: Այն

մեթոդներից կազմված ժողովածու է, որոնք տեսակավորված են հիմնականում՝ ըստ աշակերտների

կարողությունների: Կագանի մեթոդի հիմքում դրված է համագործակցության գաղափարը, և այդ

մեթոդով փորձ է կատարվում հաշվի առնել անհատական յուրահատկությունները:

Ուսուցանում–ուսանում գործընթացն ունի երկու նպատակ՝

- Տվյալ առարկայի նպատակը՝ դասավանդվող նյութի հիման վրա զարգացնել ճանաչողական

  հմտությունները:

- Սոցիալական նպատակը՝ առաջինը, աշակերտները պատասխանատվություն են ստանձնում:

Երկրորդ, նյութը դասավանդվում է համագործակցության վրա հիմնված տարբեր եղանակներով՝

զարգացնելով աշակերտների շփման հմտությունները:

Համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է:

Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման

հմտություններ: Ուսուցիչն աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալ. փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցություն ապահովող տարատեսակ մեթոդներ: Ի տարբերություն Կագանի մեթոդի, ավանդական խմբային աշխատանքը չի պահանջում համագործակցության այդքան սերտ մակարդակ, և պարտադիր չէ, որ հաջողությունը պայմանավորված լինի բոլոր աշակերտների մասնակցությամբ:

Ուսման գործընթացի կազմակերպումը բաղկացած է 6 հիմնական տարրից՝

Խումբ	Դասաժամի կառավարում
Համագործակցելու նպատակ	Համագործակցելու պատրաստակամություն
Ուսուցման հիմնական սկզբունքները	Ուսուցման եղանակները

Եզրակացություն

Կարողականության մղող համագործակցային ուսուցումը աշակերտին թույլ է տալիս՝

1. Համագործակցել ընկերների հետ

2. Լսել դիմացինի կարծիքը

3. Լինել նախաձեռնող

4. Կարողանալ գնահատել և կարևորել սեփական անձը

5. Ըմբռնել մայրենի լեզվի կարևորությունը

6. Սեփական անձի ձևավորում, ինքնաճանաչում

7. Դիմացինին գնահատելու կարողություն

8. Մայրենիի, բանաստեղծների հարուստ բառապաշարի, բառերի գանձարանի բացահայտում

9. Քերականական իմացություն

10. Իմացածը ճիշտ և հայեցի ներկայացնելու հմտություն

11 Համաշխարհային մշակույթի, համամարդկային արժեքների իմացության ձեռքբերում

12. Սովորել սովորելու կարողություն

13. Համացանցի տարբեր հարթակներից օգտվելու հնարավորություն

14. Ուսումնասիրվող նյութի ռացիոնալ յուրացում

15. Ժողովրդական և քաղաքացիական կարողականության ձեռքբերում

Օգտագործված գրականության ցանկ

1. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ /Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան/ – Երևան, 2006:

2. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը /Խաչատրյան Ս. Գ./ - Գյումրի, 2006:

Օրվա դասի պլան

Դասարան VI

Դասի տևողությունը 90ր.

Առարկան – մայրենի

Դասի թեման – դարձվածքներ, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, ոճական արժեքը

Դասի նպատակը

ա) ակադեմիական

Ճանաչել դարձվածքները գրավոր և բանավոր կոսքում:

բ) սոցիալական

Աշակերտի հմտության ձեռքբերում բանավոր խոսքում:

գ) դաստիարակչական- Ժողովրդական լեզվամտածողության ձևավորում:

Վերջնարդյունքներ- դարձվածքները կիրառի համապատասխան խոսքային միջավայրում:

Հարստացնի տեքստը դարձվածքներով, կառուցի դարձվածքներով հարուստ խոսք, մեկնաբանի դարձվածքների ոճական նշանակությունը խոսքում:

Այսօր յուրաքանչյուր ուսուցչի սուրբ պարտականությունն է կարևորել մայր լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունները:

Մերօրյա գերխնդիր եմ համարում սովորողների շրջանում նորովի անդրադառնալ բանավոր և գրավոր խոսքի գեղեցիկ,հյութեղ,արտահայտիչ ու պատկերավոր դրսևորմանը,հատկապես կարևորում եմ գրավոր խոսքին անդրադառնալը՝ թեմատիկ կամ ստեղծագործական շարադրություններ,փոխադրություններ գրելու հմտություններին ու կարողություններին խորամուխ լինելը:

Ժամանակն է հրաժեշտ տալ միօրինակ,չոր ու կաղապարային,աշակերտի մտածողությունն ու հայացքները սահմանափակող թեստերին:

Լավագույն դեպքում դրանք կարելի է կիրառել մասամբ:

Գրավոր (հատկապես գեղարվեստական և հրապարակախոսական) խոսքը պատկերավորման և արտահայտչական հնարքների ու միջոցների շնորհիվ դառնում է ավելի շոշոփելի ու տեսանելի,նկարագրություններն ասես ավելի են առարկայանում:

Հատկատես ուզում եմ առանձնացնել դարձվածքները,որոնց լայն գործածությունը բնորոշ է թե' գեղարվեստական,թե' առօրյա խոսակցական և թե' հրապարակախոսական ոճերին:Դարձվածքների տեղին օգտագործումը խոսքը դարձնում է դիպուկ,պատկերավոր և ավելի ներգործուն:

Ըստ իս՝ դարձվածքները դարերի խորքից եկած մեր ժողովրդի հոգևոր մշակույթի բազմափայլ մարգարիտներն են,թերևս դրանցից շատերը դեռ թաքնված են իրենց պատյանում:

Գաղտնիք չէ,որ դարձվածքները ծնվում և կյանք են առնում մարդու՝ մեզ շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների վերաբերյալ ունեցած պատկերացումներից,ըմբռնումներից և ճանաչողությունից:Դրանք շատ դեպքերում

խորությամբ պարունակում են նաև անհատի վերաբերմունքը առօրյա կյանքում առկա մարդկային հարաբերությունների նկատմամբ:Դարձվածքները որևէ լեզվի համար բնորոշ և բառացիորեն չթարգմանվող յուրահատուկ արտահայտություններ կամ առանձնաբառույթներ (իդիոմներ) են:

Հայերենում դարձվածքների ճնշող մեծամասնությունը բարբառային ծագում ունի և մեծ մասամբ պատկանում է լեզվի ժողովրդախոսակցական շերտին:Ասենք նաև,որ ժամանակակից հայոց լեզվում որոշակիորեն տարբերվում են գրական կամ գրքային դարձվածքներ,որոնք մեզ են հասել գրաբարից (ձայն բարբառ հանապատի,սահման քաջանց,զենն յուրյանց):Որոշ դարձվածքներ էլ օտարազգի դարձվածաբանական միավորների հայկական պատճենումներն են (աքիլլեսյան գարշապար,բաբելոնյան աշտարակաշինություն,բալզակյան տարիք):

Գերապատվություն եմ տալիս դարձվածքների տեղին ու դիպուկ կիրառմանը իմ վարած հայոց լեզվի և գրականության դասերին և ընդհանրապես առօրյայում:Սիրում եմ աշակերտներիս հետ խոսել դարձվածքների լեզվով,որն էլ ավելի բնական ու կենդանի,անմիջական ու անկեղծ է դարձնում խոսքս ու վերաբերմունքս:

Խոր և դեռևս անվերծանելի են դարձվածքների պարբերական չափանիշները:Երբեմն նկատվում են հակասական և իրարամերժ կարծիքներ մեր լեզվաբանական գրականության մեջ:Որոշ մասնագետներ դարձվածաբանության մեջ ընդգրկում են առածներն ու ասացվածքները (աղվեսի վկան իր պոչն է,կուշտը սովածին մանր կբրդի,ձուկը գլխից է հոտում,գիտունի հետ քար քաշիր,անգետի հետ փլավ մի ուտի,ահը վեր է,քան մահը),աֆորիզմները (առողջ միտքը առողջ մարմնի մեջ,լավ է կույր աչքով,քան կույր մտքով,Պլատոնը բարեկամս է,բայց ավելի մեծ բարեկամս է ճշմարտությունը),պատմական դեպքերից,դիցաբանական զրույցներից ու գրքերից սկիզբ առած և լեզվից լեզու տարածված թևավոր խոսքերն ու արտահայտությունները (Ռուբիկոնն անցնել - վճռական քայլ կատարել,գորդյան հանգույց - անհաղթահարելի դժվարություն),որոնք այսօր դարձվածաբանական մի շարք բառարաններում առկա են:Որոշ լեզվաբաններ դարձվածաբանության մեջ ընդգրկում են բոլոր կայուն բառակապակցությունները,իսկ ոմանք էլսահմանափակվում են բառակապակցությունների որոշ խմբով միայն:

Այնուամենայնիվ,դարձվածքները խոսքային պատրաստի միավորներ են՝ փոխաբերական իմաստ արտահայտող:Ուստի հենց այնպես չէ առաջացել ժողովրդի կողմից հաճախ օգտագործվող <<խոսքդ կամ խոսքերդ պատրաստ են>> արտահայտությունը:

Այսպիսով՝դարձվածաբանական միավորները կայուն են:Դարձվածքները,մեկից ավելի բառերի միավոր լինելով,տարբերվում են այդ կարգի բառերի կապակցություններից:Եվ եթե համեմատելու լինենք,ապա հստակ կնկատենք,որ բառերի ազատ կապակցությունները ձևավորվում են հաղորդակցման ընթացքում (ուրեմն դրանք կայուն լինել չեն կարող),իսկ դարձվածային կապակցությունները երբեք չեն կարող կազմվել հաղորդակցման ընթացքում,այլ կրկնվում կամ վերարտադրվում են որպես իմաստային պատրաստի միավորներ:

Վերոհիշյալը աշակերտներին հասու դարձնելու նպատակով նախ դասի ընթացքում,ապա որպես տնային աշխատանք հանձնարարում եմ կազմել T-աձև աղյուսակ՝ խնդրի երկու կողմերը համեմատելու համար:

Կայուն	Անկայուն
Դարձվածքներ,որոնց իմաստները չեն համապատասխանում բաղադրիչների բառային իմաստներին (ընդհանրական կամ	Նույն դարձվածաբանական միավորներից կազմված ազատ կապակցություններ

փոխաբերական իմաստ)	
Երեսին մի բուռ հող գցել- թաղել(ժողովրդ.) Թող որդիս գա ու երեսիս մի բուռ հող քցի: Երես թեքել-արհամարհել,անուշադրության մատնել Ընկերս երես էր թեքել ինձնից:	Գիժ Դանիելը կատաղությունից իր երեսին մի բուռ հող քցեց: Վարպետ Օհանը,գյուղացիներին տեսնելով,երեսը թեքեց:

Տրված տնային հանձնարարությունը աշակերտի համար հետազոտական աշխատանքի բնույթ է կրում,քանի որ պետք է օգտվի Ա.Մ. Սուքիասյանի և Ս.Ա. Գալստյանի <<Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան>>-ից,Վ.Ա. Սահակյանի <<Դարձվածքների դպրոցական բառարան>>-ից և անհրաժեշտ այլ աղբյաուրներից:

Դարձվածքի վերաբերյալ ընդհանուր գաղափար ունենալուց հետո գրավոր աշխատանքին՝ շարադրության նախապատրաստելիս նպատակահարմար եմ գտնում 16 աշակերտից բաղկացած դասարանը բաժանել 4 խմբի:

Խմբերին հրահանգում եմ գրատախտակին նախապես գրված դարձվածքները դասակարգել՝ ըստ ներկայացված ներքոնշյալ պահանջների կամ բացատրության:

Մեկի կակուղ դամարը բռնել,գլուխ տալ,հոգին ավանդել,շանսատակ լինել,գլխին գայլի ավետարան կարդալ,հրեշտակների հետ խոսել,գրողի ծոցը գնալ,գայլի ավետարան կարդալ,հոգին ավանդել,մահկանացուն կնքել,ոտները տնկել,գլուխ տանել,գլխին շան լափ թափել,մեկի դամարը բռնել,գլխի ընկնել,գլխին լափ թափել:

I խումբ- Դարձվածքի սահմանները որոշվում են այն կազմող որոշակի բառերի քանակով:Տվյալ դարձվածքի բառերի կամ բաղադրիչների քանակային կազմը կարող է տարբեր լինել:Երբեմն դարձվածքը կազմող որոշ բառեր կարող են դուրս ընկնել՝ չփոխելով դարձվածքի իմաստը:Աշակերտներն ընտրում են զուգահեռ դարձվածքները.գլխին գայլի ավետարան կարդալ // գայլի ավետարան կարդալ,գլխին շան լափ թափել // գլխին լափ թափել,մեկի կակուղ դամարը բռնել // մեկի դամարը բռնել:

II խումբ- Որոշ դարձվածքներ համարժեք են իրենց հոմանիշ որոշակի բառերի:Աշակերտներն ընտրում են գլուխ տալ- բարևել,ողջունել,խոնարհվել,հոգին ավանդել- մեռնել,գլուխ տանել- ձանձրացնել,գլխի ընկնել- հասկանալ,ըմբռնել դարձվածքները:

III խումբ- Դարձվածքներն օժտված են ոճական,կիրառական առանձնահատկություններով,ունեն հուզական,արտահայտչական դրական գունավորում:Խումբն ընտրում է <<մեռնել>> բառի իմաստն արտահայտող հետևյալ դարձվածքները.մեռնել-հոգին ավանդել,հրեշտակների հետ խոսել,մահկանացուն կնքել:

IV խումբ- Դարձվածքները կարող են ունենալ նաև անարգական,բացասական գունավորում:Այս դեպքում խումբն առանձնացնում է <<մեռնել>> բառի իմաստն արտահայտող հետևյալ դարձվածքները.մեռնել-շանսատակ լինել,գրողի ծոցը գնալ,ոտները տնկել:

Նախապես աշակերտներին տրված են անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր մատիտներ,թաղքագրիչներ,կպչուն թղթեր,A 2 ֆորմատի պաստառներ (42 x 594):

Այնուհետև (խմբերի 12-15 րոպե աշխատելուց հետո) հրահանգում եմ՝ չորս խմբերից յուրաքանչյուրը ներկայացնի իր առանձնացրած դարձվածքների նկարազարդած գեղարվեստական պատկերները պաստառներում:Պատրաստի աշխատանքները փակցվում են պատին՝ ստեղծելով <<պատկերասրահ>>:Նախապես ձևավորված խմբերի ներսում աշակերտները հաշվում են մեկից մինչև չորսը և կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների:Նոր ձևավորված խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր պաստառի առջև,և տվյալ խմբի անդամը,ով մասնակցել է այդ պաստառի ստեղծմանը,հանգամանալից ներկայացնում է աշխատանքը,պատասխանում հարցերին,մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ,ուղղումներ:Շրջագայությունն ավարտվում է,երբ բոլոր խմբերը ծանոթանում են ներկայացված աշխատանքներին:Հիմնական խմբերը հետո իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

<<Խճանկար>> մեթոդի այս տարատեսակը՝ շրջագայություն պատկերասրահում,նպատակ է հետապնդում փոխանակել տեղեկություններ,մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ:Այն զարգացնում է լսելու,ինքնուրույն աշխատելու,քննադատաբար,ստեղծագործաբար մտածելու հմտություններ,որոնք աշակերտի ստեղծագործական աշխատանքի հիմնական ցուցիչներն են:

Դասի ավարտին խմբերը գնահատվում են:

Որպես տնային աշխատանք՝ <<Լավ է ուշ,քան երբեք>> վերնագրով հանձնարարում եմ գրել շարադրություն,որում անպայման պետք է օգտագործեն և ընդգծեն վերը տարբերակված դարձվածքները (զուգահեռ դարձվածքներ,դարձվածքներ կամ դրանց համարժեք բառեր,հուզական,դրական գունավորում ունեցող դարձվածքներ,անարգական,բացասական գունավորում ունեցող դարձվածքներ),ինչպես նաև կարողանան տեսանելի արտահայտել իրենց պաստառների շուրջ ստացած անմիջական տպավորությունները:

Միջառարկայական կապեր

Պատնություն։ Հին Հունաստանի և Հին Հռոմի առասպելների ու լեգենդների՝ որպես դարձվածքների առաջացման հիմնական աղբյուր.

Օտար լեզուներ։ Օտար և հայերեն դարձվածքների համեմատում.

Գրականություն։ Դարձվածքները՝ պատկերավոր մտածողության զարգացում.

Արվեստ։ Արվեստի տարբեր բնագավառներում թևավոր խոսքերին առնչվող դիցաբանական զրույցների ուսումնասիրում։

Խաչվող հասկացություններ

. Օրինաչափություն. դարձվածքների կառուցվածքային օրինաչափությունները

.Անհատական և մշակութային արժեհամակարգ. դարձվածքների ոճական առանձնահատկությունների և ժողովրդի լեզվամտածողության կապը:

Ներկայացնում եմ համագործակցային դաս ԽԻԿ համակարգով

Օրվա դասի պլան

Դասարան VI

Դասի տևողությունը 45ր.

Առարկան – մայրենի

Դասի թեման – բառի բաղադրիչները. արմատ, ածանց

Դասի նպատակը

ա) ակադեմիական

1. Գաղափար կազմել բառակապակցության մասին.

2. Կարողանալ ներկայացնել բառի կառուցվածքը՝ բաղադրիչ տարրերը (արմատ,ածանց).

3. Նպաստել բառապաշարի հարստացմանը.

4. Ապահովել բաղադրյալ բառի ուղղագրական իմացությունն ու ճիշտ արտահայտությունը.

5. Կարողանալ գտնել հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատները, նաև ածանցները.

6. Ձևավորել բառակազմական վերլուծության հմտություններ:

Կիրառելի մեթոդներ՝ հասկացությունների քարտեզ, Վենի դիագրամ, բուրգ, քառաբաժան աղյուսակ, Տ-աձև աղյուսակ:

բ) սոցիալական

Աշակերտների հմտությունների ձեռքբերման ստուգում, խմբային աշխատանքի միջոցով մշակույթի և մթնոլորտի ստեղծում, ինքնակատարելագործման շարունակական ձգտում, միմյանց լսելու կարողություն:

գ) դաստիարակչական – լիարժեք տիրապետել ՀՀ պետական լեզվին՝ հայերենին:Ունենալ պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն:

Վերջնարդյունքներ – խոսքի մեջ տարբերակի ածանցավոր բառերը, տեքստից դուրս գրի ածանցավոր բառերը, տարբերակի նախածանցավոր, վերջածանցավոր բառերը: Տրված ածանցավոր բառերը օգտագործի նախադասությունների մեջ:Ճիշտ գրի ուղղագրական բարդություն ունեցող ածանցավոր բառերը: Տեքստում գտնի ածանցավոր բառերը՝ նշելով տեսակները: Բառերը ենթարկի բառակազմական վերլուծության՝ առանձնացնելով արմատները և ածանցները:

Անհրաժեշտ պարագաներ – դասագիրք, տետր, բառատետեր, գրիչ, գունավոր մատիտներ, կավիճ, գրատախտակ:

Ցուցադրական նյութեր – գծապատկերներ, պաստառներ, պատկերներ:

Խմբի չափը, կառուցվածքը

Հիմնական հասկացություններ – արմատ ածանց, բառ, բառակազմություն:

20 աշակերտից բաղկացած դասարանը հաջորդաբար հաշվում է մեկից հինգ թվերը և ձևավորվում է 4 խումբ, յուրաքանչյուրում 5 աշակերտ:



1. Ընթերցող, հարցեր տվող – կարդում է հանձնարարված ողջ նյութը և ստուգում, հասկացե՞լ են արդյոք խմբի անդամները:

2. Ժամանակին հետևող- հիշեցնում է ժամանակի մասին և թույլ չի տալիս ժամանակ վատնել:

3. Խրախուսող /գովաբանող – խրախուսում է խմբի յուրաքանչյուր անդամի լավ աշխատանքը և գովաբանում ներդրումը:

4. Դիտորդ-խմբի աշխատանքի ընթացքում դիտորդական թերթիկում գրանցում է յուրաքանչյուրի գործողությունը:

5. Գրառող- գրանցում է խմբի աշխատանքը, հիմնավորումներն ու լուծումները:Այն պետք է հիմք ծառայի խմբին ներկայացման համար:Դերերը կարող են տարբեր լինել՝ կախված վարժության նպատակներից: Ուսուցիչը դրանք պետք է համապատասխանեցնի վարժությանը:

Դերերը խմբի անդամներին հանձնարարում են պատահականորեն:Աշակերտները պետք է տարբեր դերեր կատարելու փորձ ձեռք բերեն:

Խթանում փուլի նկարագրությունը և տևողությունը (5-7 ր.)Դասը սկսվում է մայրենի լեզվի մասին ասված մեծերի խոսքերով: Յուրաքանչյուր խումբ ունի իր բնաբանը:

1-ին խումբ. Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում:

ԱՎ. Իսահակյան

2-րդ խումբ. Լեզուն ազգի հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է երկրորդը:

Վ. Տերյան

3-րդ խումբ. Բավական չէ ազգասեր և հայրենասեր լինելը, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել. պետք է սիրել, պաշտել, զգվել հարազատ մոր հարազատ լեզուն. այս սերը միայն կբանա մեր առջև լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը:

Ղ. Աղայան

4-րդ խումբ. Հայոց լեզուն, որքան ավելի եմ զբաղվում նրանով, ինձ թվում է ճոխության հրաշք և ոսկու հանք. որքան մշակում ես, այնքան զտվում է և շողշողում. որքան գույներ ունի և արտահայտչական հնարավորություններ...

Նար-Դոս

Գրատախտակին շրջանի մեջ ենք առնում առանցքային <<բառ>> հասկացությունը, որի շուրջ գրի են առնվում աշակերտների թվարկած ուղեկից բառերը:



Հասկացությունների քարտեզագրումից հետո անցում է կատարվում իմաստի ընկալման՝ անմիջական դասավանդման փուլին:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը (20-25 ր.)

Կազմակերպվում է խմբային հետազոտական աշխատանք:

Մինչ խմբային հետազոտական աշխատանքին անցնելը , մինչև խմբերի առաջադրանքներ ստանալը աշակերտներին հանձնարարվում է պարզաբանել գրատախտակին գրված բառերի հակադրական շարքերը և պատասխանել առաջադրված հարցերին

1) քար, սար, ծառ, դաս, կար, շուն

2) հացատուն, երկաթե, անլույս, մեծատուն

1. Ինչպիսի՞ բառեր են առաջին շաչքի բառերը, ինչու՞:

Աշակերտը պատասխանում է՝ նշելով, որ առաջին շարքի բառերը պարզ, արմատական բառեր են, որոնք հնարավոր չէ բաժանել բաղադրիչների:

2. Ինչո՞վ են տաևբերվում 2-րդ շաչքի բառերը առաջին շարքի կամ վերը նշված շարքի բառերից: Աշակերտն անմիջապես բառերն բաժանում է բաղադրիչների: Հանձնարարվում է ընդգծել անհնչյունափոխ արմատներն ուղիղ, իսկ հնչյունափոխված արմատները՝ շեղատառերով: Սովորողը, ուշադրությունը կենտրոնացնելով գրատախտակին, կարդում է միայն ընդգծված հիմնային բաղադրիչները և դրանք ուսուցչի անմիջական միջամտությամբ անվանում են արմատներ:Ուսուցիչը բացատրում է, որ դրանցով է ամբողջանում բառը և իմաստ արտահայտում:

հացատուն= հաց+ա+տուն

երկաթե =երկաթ + ե

քնքշորեն = քնքշ + որեն

սրագագաթ =սր +ա+գագաթ

ջրհոս = ջր + հոս

թարթիչ = թարթ + իչ

Այնուհետև աշակերտի ուշադրությունը հրավիրում ենք մյուս բաղադրիչներին, որոնք են ա հոդակապը, ե, որեն, իչ ածանցները, որոնք չունեն անկախ գործածություն:

Այս աշխատանքից հետո աշակերտը սահմանում է.<<Արմատը բառի հիմնական իմաստ արտահայտող մասն է>>:

Այնուհետև խմբերին տրվում են առաջադրանքներ 10-12 րոպե տևողությամբ:

1-ին խումբ – Т- աձև աղյուսակի համապատասխան սյունակներում բառաշարքից դուրս գրել հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատները.

Գնդակ, հանք, բառարան, գրիչ, ըմպանակ, նստել անխիզճ:

Հնչյունափոխված արմատներ	Անհնչյունափոխ արմատներ
գնդակ գրիչ ըմպանակ նստել	հանք բառարան անխիղճ

2-րդ խումբ – խմբավորել բառերը ըստ տեսակների (բարդ, ածանցավոր) և գտնել դրանց ընդհանուր արմատները՝ ներկիայացնելով Վենի դիագրամի միջոցով.

Անտուն, ջրային, ջրհեղեղ, մեծատուն, կարգախոս, անկարգ, օդանավ, օդային, գրավոր, գրագիր:



3-րդ խումբ – Տրված արմատները միացնելով կազմել 5 բառ.

ա) երկիր մարտ
ժպիտ գունդ
ըմբիշ երես
ծառ նվեր
ազգ տունկ

բ) ջուր արձան
հյուր սեր
ձուկ գիր
սև փոս
հուշ որս

երկրագունդ
ժպտերես
ըմբշամարտ
ծառատունկ
ազգանվեր

ջրափոս
հյուրասեր
ձկնորս
սևագիր
հուշարձան

4-րդ խումբ – առանձնացնել պարզ կամ արմատական բառերը.

Բերք, միրգ, պատշգամբ, օվկիանոս, մեջք, էքսկուրսիա, դժգույն, ապերախտ, համբույր, վարդապետ:

Աշխատանքային ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, իսկ ուսուցիչը կատարում է անհրաժեշտ ուղղումներ ու լրացումներ:

Կշռադատման , գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը (5-15 ր.)

Այս փուլը ամբողջ նյութին անդրադարձ կատարելու փուլն է:Աշակերտները կազմում են գծապատկերների բուրգ ուսուցչի օգնությամբ:

Արմատ

Բառի հիմնական իմաստն արտահայտող մասը արմատն է:

Հնչյունափոխված	Անհնչյունափոխ	Ինքնուրույն գործածություն ունեցող	Ինքնուրույն գործածություն չունեցող
տնամերձ տնական տնտես	մեծատուն վերնատուն հացատուն	սար գիր քար	ման (գալ) զոր (ք) վազ (ել)

Կշռադատման փուլն ավարտվում է քառաբաժան աղյուսակի մեթոդական հնարով:

Գրատախտակը բաժանում ենք 4 մասի: Աշակերտներն իրենց մտքերը համապատասխանաբար գրառում են 4 բաժիններից յուրաքանչյուրում:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ինչպե՞ս կարող եմ օգտագործել	Ի՞նչ եզրակացություններ արեցի

Գնահատում – նախօրոք գնահատման ձևերին տեղյակ աշակերտները ուսուցչի կողմից յուրաքանչյուր խմբի համար պատրաստված գնահատման թերթիկին ստանում են մրցանակային նիշ՝ ուշագրավ հարցերի ու պատասխանների համար կամ հակառակ իմաստով նիշ՝ ոչ ուշագրավ, սխալ պատասխանների համար:

Տնային հանձնարարություն

Առաջադրանք 6: Տրված բառազույգերի բաղադրիչները տեղափոխելով՝ ստանալ նոր բառեր:

ա) երկրագունդ, շարժուձև

բ) գրավաճառ, սեղանատուն

գ) ազգանուն, ընտրակարգ

Առաջադրանք 7: Անվանել մեկ բառով. ընդգծել գրածդ բառերի արմատները.

ա) կառավարության ղեկավար

բ) առաջին զավակ

գ) գետի՝ ծովը թափվելու տեղը

դ) սուրճ եփելու աման

ե) նռան ծառը

զ) ութ տասնյակ

է) Հայաստանում բնակվող:

Միջառարկայական կապեր

Պարզ և ածանցավոր բառերի կիրառումը՝

1) Գեղարվեստական պատկերավոր խոսքում
2) Գիտական տեքստերում (մաթեմաթիկա, ֆիզիկա...)
3) Գործնական գրություններում
4) Իրավաբանության մեջ:

Խաչվող հասկացություններ

1) Օրինաչափություն. օրինաչափությունների առկայությունը բառակազմության բոլոր եղանակներում:
2) Կայունություն և փոփոխություն. բառակազմական եղանակների համեմատական կայունությունը և փոփոխությունները ժամանակի ընթացքում:

Ա. Աղայան

Օրվա դասի պլան

Գրականություն- VII դասարան, դասի տևողությունը 45 ր.

Դասի թեման - << Էլի գարուն կգա >> տաղը

Դասի նպատակը

ա) ակադեմիական

. Արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը,արտասանել անգիր.

. Վերարտադրել այն սեփական բառերով.

Ընդհանրացնել և հակիրճ ներկայացնել բանաստեղծության հիմնական գաղափարը:

բ) սոցիալական

. Աշակերտների հմտությունների ձեռքբերման ստուգում.

.Նոր մշակույթի ու մթնոլորտի ստեղծում:

գ) դաստիարակչական

.Կյանքի հարափոփոխ և մարդու մահկանացու լինելը որպես բնության անվերծանելի օրենք:

Վերջնարդյունքներ – Արտահայտիչ, վարժ կարդա, այնուհետև անգիր ներկայացնի բանաստեղծությունը, պահպանի հայերենի հստակ արտասանություն, շեշտադրումը, ստեղծագործաբար վերարտադրի բովանդակությունը, ամբողջացնի հիմնական գաղափարը:

Խթանում

Մեկնաբանել այս ժողովրդական ծագում ունեցող ասույթը:

Իմաստի ընկալում

Աշակերտներն անհատապես կարդում են և կարևորում յուարքանչյաուր տան ամենակարևոր տողն ըստ իրենց: Քննարկում են այն իրենց զույգի հետ:

Ապա 4 խմբի բաժանված դասարանին հանձնարարվում է պատասխանել հարցադրումներին:

I խումբ- Նոր գարնան հետ ի՞նչը կփոխվի, իսկ ի՞նչը՝ ոչ:

II խումբ – Ի՞նչ կասեն ուրիշ աշուղները:

III խումբ – Ի՞նչ կկատարվի աշխարհում բանաստեղծի մահից հետո:

IV խումբ – Ինչպե՞ս կշարունակվի կյանքը:

Խմբերի ներկայացրած պատասխանները ամբողջացվում են ուսուցչի ամփոփիչ մտքով, որն ուղղվում է ողջ դասարանին՝ շարունակելու համար:

Այդ ամփոփիչ մտքերը գրի է առնվում գրատախտակին գծված քառաբաժան աղյուսակի համապատասխան սյունակում:

Կշռադատում - Այսպիսով սովորողն անհատապես մեկ նախադասությամբ գրում է բանաստեղծության հիմնական միտքը:

Տնայի առաջադրանք – Բանաստեղծությունը սովորել անգիր:

. Գրականության տետրում պատկերազարդել բանաստեղծությունը՝ ըստ սեփական ընկալման:

Խաչվող հասկացություններ

1. Օրինաչափություն – բանաստեղծության ռիթմը

2. Կառուցվածք և գործառույթ – տաղաչափությունը

3. Անհատական և մշակութային արժեհամակարգ- գրողի օգտագործած բառապաշարը, խոսքի պատկերավորման միջոցները:

4. Ժամանակ և տարածություն – պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:

Միջառարկայական կապեր

Արվեստ – պատկերազարդումներ

Պատմություն – պատմական ակնարկ, գրողի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին

Հայոց լեզու – բառապաշար, մտածողություն

Հասարակագիտություն – հույզեր, հոգեկան վիճակներ, որոնք դառնում են գրականության նյութ: